

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 9

30.04.2021թ.

**1. Համալսարանի ստորաբաժանումներում 2020-2021 ուս. տարվա երկրորդ կիսամյակի միջանկյալ քննությունների արդյունքների վերաբերյալ.**

1.1. Հանձնարարել դեկաններին.

- Մեկ շաբաթյա ժամկետում ամփոփել թեստային քննություններից շատ բարձր կամ շատ ցածր առաջադիմություն ապահոված առարկաների ցուցակները, վերլուծել, պարզել պատճառներն ու ներկայացնել ՈՒԳԿ վարչություն:

- Մեկ շաբաթյան ժամկետում ՈՒԳԿ վարչություն ներկայացնել թեստերի կազմման աշխատանքներում իրենց պարտականությունների մեջ թերացող աշխատակիցների ցուցակները և ներկայացնել կարգապահական տույժի՝ «նկատողության», իսկ ամբիոնի վարիչներին հայտարարել «զգուշացում»:

- Ուսանողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ՝ միջանկյալ քննություններին մասնակցության կարևորության վերաբերյալ:

1.2. Հանձնարարել աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին՝ պատրաստել խնդրահարույց առարկաների գծով նոր մասնագետների հավաքագրման հայտարարություններ:

**2. Համալսարանի ստորաբաժանումներում 2020-2021 ուս. տարվա երկրորդ կիսամյակի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ուսանողների հաճախումների (ըստ e-Buh համակարգի տվյալների՝ առարկայի/առարկաների պարապմունքներից 30% և ավելի բացակայություններ ունեցող), ինչպես նաև համալսարանի ուսումնական գործընթացների կառավարման ավտոմատացված e-Buh համակարգում դասախոսների կողմից ուսանողների հաճախումների տվյալների գրանցման, առկա խնդիրների վերաբերյալ.**

2.1. Հանձնարարել դեկաններին և ամբիոնի վարիչներին.

- Ուսանողների և նրանց ծնողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ՝ ուսումնական պարապմունքներից բացակայությունների, դրանից ծագող խնդիրների վերաբերյալ՝ հնարավորինս խուսափելով 50% և ավելի բացակայությունների պատճառով կուրսի կրկնություններից ու հեռացումներից:

- Մեկ շաբաթյա ժամկետում պարզել ուսումնական պարապմունքներից ուսանողների բացակայությունների պատճառները և մեծաթիվ անհարգելի բացակայություններ ունեցող, սովորելու ցանկություն չունեցող ուսանողներին ներկայացնել համալսարանից հեռացման (հրամանները կցվում են):

